ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» փետրվարի 2015 թ. N 33-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի «Հողօգտագործողներին պետական աջակցություն տրամադրելու մասին» N 588-Ն որոշման հավելվածի՝

1) 2-րդ կետի 1-ին ենթակետում «տրամադրում» բառից հետո լրացնել «կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) հանդեպ պարտավորություններ ունեցող հողօգտագործողների պարտավորությունների մարում» բառերը.

2) 5-րդ կետում «տեսքով» բառից հետո լրացնել «կամ հիմնադրամի հանդեպ ունեցած պարտավորությունների մարման եղանակով» բառերը.

3) 6-րդ կետում «ընկերության» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ ընկերություն)» բառերը, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության» բառերը հանել.

4) 7-րդ և 8-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Սույն կարգի 5-րդ կետում նշված գումարը, ընկերության կողմից տրամադրված աշնանացան ցորենի սերմի դիմաց գումարը կամ հանքային պարարտանյութերը հողօգտագործողներին հատկացնում է հիմնադրամը՝ նախարարության կողմից տրամադրված ցուցակի հիման վրա:

Ցուցակը նախարարության կողմից ներկայացվում է ըստ համայնքների:

Հիմնադրամը՝ իր հանդեպ ունեցած պարտավորությունների մարումն իրականացնում է այդ պարտավորությունների արժեքի համամասնորեն նվազեցման եղանակով:

8. Հիմնադրամը իր միջոցներով իրականացնում է սույն կարգի 5-րդ կետում նշված գումարի կամ աշնանացան ցորենի սերմի արժեքի փոխհատուցումը կամ հանքային պարարտանյութերի տրամադրումը կամ իր հանդեպ ունեցած պարտավորությունների մարումը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի դեկտեմբերի 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ *Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*